

572
S-37



20 JUL 2000

«ԽԱՐԱԳՈՒՆԻ» ԳՐԱԴԱՐԱՆ Տ. 1
80. 41

572
S-37

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՎԵԱՆՔ

ԿԱՄ

ՆԱԽՆԻ ԴԱՐԵՐԻ ՄԱՐԴԸ

13 Եկամուկ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԵՎՐԱՄԱՆԻ ՏԱՐԱՆ ԹՐ. Խ. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7
1908

ԱՐԱՆԻ ԱՅ
14.08.2013

13122

ԳՈՅԱՐ ՀՅՈՒՍՅԱՐԱԿԱՆ ԵՐՊԱՐԱԳ ԴՐԱՄԱ



ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՆՔ

I.

Մարդու միշտ այսպէս չի ապրել,
ՊԱՏՄՈՒ- ինչպէս որ այսօր, այլ հազարաւոր
թիկն տարիներ առաջ բոլորովին այլ կեանք
է վարել և դեռ այսօր էլ կան ազգեր,
որոնք իրենց նիստ ու կացով շատ են նմանւում
նախնի մարդուն։ Մենք՝ հին մարդկանց յաշորդ-
ներս սկսում ենք ուսումնասիրել թէ ինչպէս
է ապրել մարդը սկզբներում երբ նա երկան է
եկել երկրագնդի վրայ և տեսնում ենք, որ նա
սկզբում եղել է վայրենի, անզարդացած և ժա-
մանակի ընթացքում նա կարողացել է կամաց-
կամաց յառաջադիմել, զիւտեր է արել, շատ
բանին ինքն է յարմարուել, շատ բան իրեն է
յարմարեցրել և այդպիսով առաջ է եկել ներկայ
յառաջադիմած ու զարդացած կեանք, որ դեռ
էլ աւելի առաջ կերթայ և կզայ մի օր, երբ մեզ
կդասեն կիսազարդացածների շարքին։

Մարդու կեանքի, յառաջադիմութեան ու
կուլտուրական զարդացման պատմութիւնը կոչ-
ում է մարդկութեան պատմութիւն և բաժան-


ւում է երկու շրջանի. ա). Նախալատմական, որի մասին գրաւոր փաստաթղթեր չկան, չկայ գրաւոր պատմութիւն, բայց գիտնականները տեսնելով այդ շրջանի զէնքերը, գործիքները, ամանները, որոնք գտնւում են պեղումների ժամանակ, կարողացել են նկարագրել նրանց կեանքը, վերջապէս գտել են հին գերեզմաններ, անձաւներ մարդկային կմախքներով. բ). պատմական, երբ մարդիկ գիր են գտնում, գրի են առնում տեսածն ու լսածը, պատահածն ու եղածը և այդ գրքերը մնալով հասել են մեզ և ուսում առած մարդիկ նրանցից կազմել են պատմութիւն և կամ թէ հին մարդիկ քարերի, աղիւսների, պատերի, ժայռերի վրայ նկարել են իրենց ժամանակի անցքերը, վերջապէս գրել են՝ թագաւորն իր յաղթութիւններն է նկարագրել և կամ թէ արձաններ կանգնել, որոնք որպէս կենդանի վկաներ, գեռ այսօր էլ կանգուն են:

Այն հողագունդը կամ երկրագունդը, Երկիր որի վրայ մենք ենք բնակւում միշտ այսպէս չի եղել. Այնտեղ որտեղ այսօր ծովեր կան ու գետեր, գիտնականների կարծիքով մի ժամանակ ցամաք երկիրներ կարող էին լինել, կամ թէ ներկայ ցամաքային երկիրներից մի քանիսը ծովով կարող էին ծածկուած լինել և այդ կարծիքը ճշշտում է, միայն երկիրը կամ ամբողջովին և կամ մաս-մաս փոփոխուել է շնորհիւ երկրաշարժի-

կամ ջրհեղեղի, գուցէ և հրաբխային գործողութիւնից և այդ յեղացրջման ժամանակ աղղեր ու երկիրներ են անյայտացել՝ ոչնչացնել, ծածկուել հողի տակ և ահա այսօր շատ տեղերում սկզբումներ անելիս հողի ամենախոր շերտերում մարդկային կենդանիների, ձկների կմախքներ են գտնուում, մինչև անգամ գործիքներ, որոնք պարզ ապացուցանուած են երկրի յեղացրջում եղած լինելը. Դիտնականների ասելով, մարդկութիւնը ներկայումս բնակւում է մի մեծ յեղացրջումից և փոփոխութիւնից յետոյ առաջացած մակերեսոյթի վրայ. Անուրանալի մի փաստ է նաև այն որ շատ հին ժամանակ երկրագնդի վրայ ապրել են հսկայ կենդանիներ՝ մամոնտ, հսկայ փիդ, հսկայ եղջերու, հսկայ ոնցեղջիւր և այլն, որոնք այլ ևս չկան և որևէ է պատահարից ոչընչանալով վերջացել են, իսկ յետոյ առաջացողները ներկայումս գոյութիւն ունեցող տեսակներն են:

Մկղբում մարդը ոչինչ չունէր, նա աբնակա- զատ թափառում էր որտեղ և կամե- րսն նար և որտեղ որ մութը վրայ էր հաս- նում, այնտեղ էլ զիշերում էր, միայն թշնամուց՝ գազանից պաշտպանուելու համար նա զիշերում էր քարանձաւում, ծառի վրայ, փոսի մէջ և յաճախ փաթթաթւում էր չոր տերե-ների մէջ. Մարդուս ամենահին բնակարանը քա- րանձաւն է (նկար № 1):

Մինչև այսօր բազմաթիւ քարանձաւներ են գտնուած մարդկանց ու կենդանիների կմախքներով. քարանձաւներից շատերը լցուածեն դանազան մնացորդներով՝ եղջիւրներով, սմբակներով և կամ թէ ոսկորներ են ածած այս ու այն տեղ կամ թէ կան աղբանոցներ, իսկ մոռաքերի մօտ էլ վառարանների հետքեր։ Քարանձաւներն ուշ ժամանակներում գերեզմանատեղեր են եղել



(Նկար № 1)

(Նկար № 2): Քարանձաւում ապրող մարդիկ կոչւում են «Քարանձաւի մարդիկ»։ Մարդս աւելի հմտացել է կեանքին և ժամանակի ընթացքում միջոցներ է փնտուել իրեն ամեն տեսակ թշնամիներից ապահովելու և աւելի ուշ ժամանակներում մարդս մտածում է ջրի վրայ իրեն համար բնակարաններ շինել և ծանծաղուտ տեղերում նա ցցերի վրայ բնակարաններ է շինում։

1854 թ. Զելիցերիայի Ցիւրիխ քաղաքի մօտ եղած լճի ծանծաղուտ տեղերից մէկը պիտի ցամաքացնէին և այդպիսով երկան կդար մի արգաւանդ տեղ, որ երկրագործութեան համար շատ մեծ բարիք է մասնաւանդ այնպիսի երկրում, ուր ազգաբնակչութիւնը խիտ է բնակեցրած։ Ցամաքացնելիս մարդիկ տեսան, որ աղմի մէջ ինչոր ցցեր են տնկած և բաւական խոր ու լաւ էլ ամրացրած, բայց մասամբ կոտրտուել էին, մասամբ էլ փառել։ Բանւորները մեծ հետաքրքրութեամբ




(Նկար № 2)

դիտում էին այնտեղ գտած զանազան իրեղէնները և չգիտէին, թէ ինչպէս և ինչտեղից պէտք է այնտեղ ընկած լինէին այդ բոլորը, ինչպէս օրինակ՝ բորի պարաններ, հին ձեւերի կծիկներ, բազմատեսակ գործիքներ ու գէնքեր, ամանեղէն և մինչև անզամ խնձորի ու տանձի կտորները, և այդ բոլորը մասամբ քարացել էր, մասամբ էլ ածխացել։

Տեղական ուսուցիչներից մէկը լսելով այդ, վերցրեց բանւորներից գտած իրերից մի քանիսը

և ուղարկեց Յիւրիխի գիտնական ընկերութիւններից մէկը, որտեղից մի գիտնական գնաց տեղն ու տեղը գիտելու ցամաքեցրած վայրը և բանից դուրս եկաւ, որ այդտեղ մի ժամանակ եղել են բնակարաններ, ապրել են մարդիկ և նրանց բնակարանները շինած են եղել ջրու մ զտնուած ցիցերի վրայ։ Այդ բնակարանները յաճախ կրակի զոհ են դարձել և գուցէ այդպիսի մի պատահարից յետոյ այլևս մարդիկ ջրի վրայ բնակարաններ չեն շինել։ Զվիցերացիք վերականգնեցին ցցէ բնակարաններից մի քանիսը (նկար № 3)։



(նկար № 3)

Երբ մարդիկ աւելի յառաջադիմեցին և բնակարանի կարիքն աւելի մեծացաւ, սկսեցին արհեստական քարանձաւներ փորել, որովհետեւ եղածները բաւական չէին, յետոյ սկսեցին գերաններից տներ շինել, ծածկում էին ծառերի ճիւղերով, տերեներով, խոտով, ներսից սւաղում

էին, ծխնելոյզներ էին բացանում, իսկ շատ ուշ սկսեցին սիւներով ու քարերով տներ շինել և երբ արդէն պատմութիւնն սկիզբ առաւ, բարեւլացիք սկսեցին աղիւս պատրաստել և աղիւս տներ շինել։

Թժուար հարց է ասել թէ մարդս այս կերպիցի կամ այն բանով էր կերակրուում հին ժամանակ, միայն ի հարկէ, նա ուշ տում էր այն, ինչոր դուրեկան էր և նա ոչ մի խտրութիւն չէր դնում իր կերածների մէջ, երբէք չէր զգում, որովհետեւ միշտ կարիքի մէջ էր։ Ամենազլիսաւոր կերակուրներն էին բոյսերը՝ պտուղներ, տերհներ, արմաիք, հատիկներ և մարդս դոցա հետ միասին ուտում էր ձկներ, օձեր, որդեր, զանազան կենդանիների ու գազանների միսը։

Բայց այս բոլորը նա պատրաստի չէր գըտնում, այլ շարունակ որոնում էր, մի տեղից միւսն անցնում և երբ համոււմ էր, նորից ոկըսում էր որոնել։ Վերջապէս նա նկատեց, որ տարուայ որոշ ժամանակներին այս կամ այնտեղ մի որեւէ բոյս է հասնում և նա ժամանակամիջոցին համոււմ էր նշանակած վայրը կերակրուելու համար։ Այս տեղափոխութեամբ նա սկսեց գիտել այն պատճառները, որով մի որեւէ բոյս, հէնց օրինակ ցորենը միայն որոշուած վայրում էր բնուում և նկատեց, որ հատիկ ընկած տեղը ուրից բնուում է։ Այսպիսով ինքն էլ գլխի ընկաւ


և սկսեց ցանել, որով և սկիզբ առաւ նրկրագործովթինը, Այսքանով էլ չբաւականացաւ մարդը և նկատելով որ մի քանի բոյսեր առատ բերք են տալիս, նրանց մշակութեամբ էլ զբաղուեց: Յանուող բոյսերից ամենաառաջիններն են թթինա, կորեկ, սիմինով, մախա, զարի և ցորեն:

Նոյնպէս վարուեց նա և մսեղէնի հետ. սկսեց կենդանիներ որսալ և մսով կերակրուել, բայց որովհետև միսը շատ անգամ աւելանում էր ու փչանում, ուստի դրա առաջն առնելու համար արեի տակ ապօւխտ էր դարձնում և պահում:

Թէ երկրագործութեան և թէ որսորդ ՔԱՐԵ ԴԱՐ դութեան համար մարդուն գործիքներ ու զէնքեր էին հարկաւոր, մինչդեռ

նա միայն փայտից էր օգտագում, նրանով էր փորում հողը, որպէս զի արմտիք հաւաքէ և կամ որևէ գաղանից կամ կենդանուց պաշտպանուի, միենոյն ժամանակ երբ կարծր կեղև ունեցող պտուղ էր ուզում ուտել, ատամներն անզօր էին և ստիպուած էր քարի օգնութեանը գիմելու՝ դնում էր մի քար, վրան դնում ընկուզը կամ կաղինը և միւս քարով կոտրում և ահա այստեղից նա գտաւ, որ քարը իրեն շատ յեծ ծառայութիւն կարող է անել և աեսնելով որ քարերից կայծաքարը և կարծր է և յարմար, սկսեց տաշել քարը քարով և իր համար դանակներ պատրաստեց (նկար № 4): Նա այդքանով


չբաւականացաւ և շուտով զլխի ընկաւ, որ հատիկները կարելի է մանրել՝ աղալ, և վերցրեց մի հարթ քար, վրան հատիկներ ածեց ու սկսեց շփել մի ուրիշ քարով և այդպիսով առաջացան երկանաքարերը: Փոքր առ փոքր նա սկսեց կատարելագործել իր գործիքները և շուտով քարէ-



(նկար № 4)

կացիններ պատրաստեց (նկար № 5) ու իր յարմարութեան համար նախ ամրացնում էր քարերը փայտի վրայ, իսկ յետոյ սկսեց փայտը փորել ու քարը մէջ դնելով ամրացնել (նկար № 6): Աւելի ուշ նա քարն էր ծակում և կոթը միջով անցկացնում, ինչպէս որ այդ անում են այժմէ Քարի հետ միասին նա սկսեց օգտուել նաև ձըկ-

Ների և կենդանիների ոսկորներից, Ահա այստեղ
(նկարը № 7) ներկայացնում է քարի գործածու-
թեան նախնական ժամանակների գործիքները.
վերևի մասում՝ երեք նկարները ինչպէս նաև
ցածի մասում եղած երկու կողմի որածայր նը-
կարները քարէ դանակի, նիզակի ծայրերի ու
դանակների տեսակներն են շինուած կայծաքա-
րից, փոքրիկ որածայրը ոսկը ասեղ է, երկու



(նկար № 5)



(նկար № 6)

կանթանմանները ոսկը կանթեր են ձռւկ որ-
սալու համար, մնացեալ երկուսից մէկը արջի
ատամից է շինուած, միւսը ձիու ականջի ոսկ-
րից մանեակ շարելու համար:

Քարէ դարը բաւական երկար է եղել, մար-
դիկ բաւական ժամանակ միայն քարով են կա-
ռավարուել, բայց հետզհետէ քարը կատարելա-

գործուել է: Եղել է հին քարային շրջան, երբ
գործիքները կար-
ծը էին, բայց
կոպիտ կերպով
տաշած, մինչդեռ
երբ քարէ դարը
անց էր կենում,
որովհետևմարդիկ
հանք էին գտել
արդէն կային լաւ
հարթած ու տա-
շած գործիքներ,
թէպէտաւելի փա-
փուկ քարից էին
շինուած. այսշըր-
ջանն էլ կաչըրում
է նոր քարային:

(նկար № 7)

Ինչպէս ամեն կերպնեղում էր մարդը
չսցուհուս և գֆուարութեամբ ձեռք բերում ամեն
ինչը, այսպէս էլ հագուստից էր նեղ-
ւում նա: Նա տկլոր էր և հարկաւոր
էր պաշտպանուել, որովհետեւ միշտ տաք երկրում
ապրել չէր կարող և հանգամանքները ստիպում
էին նրա անցնել ցուրտ երկիրները, որովհետեւ
հետզհետէ բազմանում էին, հողի կարիքը, հացի
խնդիրը նրան անողոք կերպով առաջ էր մղում
և նա հաւանական է, որ սկզբում դարձեալ բու-


սեղէնով պատսպարուէր, բայց երբ արդէն ձեռք տուեց որսորդութեան՝ սպանած կենդանու, գազանի մազեղէնի ու մորթերի մէջ էր փաթաթւում, որով շատ անգամ որսի ժամանակ կարողանում էր խաբել որսի կենդանիներին ու գազաններին ու ողջ-ողջ բռնել։ Այնուհետև մարդը բռնեղէնից թաղիքներ է պատրաստում ու մէջ փաթաթւում, մինչև որ կատարելագործեցին և սկսեցին գործուածքներ կամ կերպաններ պատրաստել, որով ոստայնանկութիւնն առաջացաւ։ Առաջ անթե շապիկներ էին կարում ու հագնում, յետոյ սկսեցին թեերով երկար շապիկներ պատրաստել, որից ևներկայումս եղած շորեղէնն է հնարուել։

Մարդուս ընկերն է կրակը, որ նրան կրցկ ամենամեծ ծառայութիւններ է մատուցել (Նկար № 8)։ Դրականապէս չի կարելի ասել թէ ինչպէս մարդս գտաւ կրակը, բայց գիտնականները կարծում են, որ կայծակ խփելուց կարող էր հրդեհ ծագել և մարդս օգտուելով այդ հանգամանքից որևէ է միջոցով մշտապէս կպահէր կրակը, որպէս զի հարկաւոր գէպքում օգտուէր։ Վերջապէս կայծաքարը տաշելիս կայծեր էն առաջանում, որից մօտիկ գտնուող չոր խոտը կարող էր բռնկուել և կամ թէ աբեթի միջոցով կարելի էր կրակ առաջանել, ինչպէս որ այդ անում էն հայ գիւղացիները դեռ մինչև այսօր։ Ասկայն կրակ առաջաց-

նելու ամենասովորական ու հին ձեւ փայտի շփումն է, որի արագութիւնից գոյանում է կրակ և մարդս երկար ժամանակ կարենը դէպքում այդ միջոցին է զիմել. դեռ մինչև այսօր էլ փայրենիները փայտերի շփումով են կրակ առաջնում։


Կրակը մարդուն պաշտպանում էր ցրտից և նրան աաք կերակուր էր մատակարարում։ Սկզբում միսը գցում էին կրակի վրայ ու խորովում, յետոյ մօխրի մէջ էին թաղում, ապա կրակի մէջ տափակ քարեր էին դնում ու տաքացնելով՝ միսը զընում վրան որ խորովի, բայց երբ արդէն ամանեղէնն ըսկիզբ առաւ, սկսեցին ամաններով եփել, ու բուսեղէնից էլ կերակուրներ պատրաստել։

Ամեն մի բնակարան ունէր հնոց, վառարան, որտեղ սովորաբար միշտ կրակ էր լինում, պէտք չեղած ժամանակ թաղուած էր մօխրի մէջ։ Երբ արդէն հասարակութիւններ էին կազմուել ու մարդոց մէջ մտել էր հաւատի գաղափարը, կրակը պահուում էր քրմերի վերահայեցողութեամբ կոատան մէջ։



(Նկար № 8)


կրակի գիւտը կատարելագործեց մարդուներ դու ձեռնարուեսաւը։ Մարդը ամանեղէն չունէր և հեղուկների համար, օրինակ ջրի համար գործ էր ածում փոսացրած քարեր, խեցիներ, գաճակեր, դդումներ և խոշոր պտուղների կճեպներ, բայց դրանցով անկարելի էր կերակուր եփել։ Վաղուց արդէն նակողովներ ու զամբիւղներ էր հիւսում պտուղներ հաւաքելու համար և նըկատելով որ նրան հեղուկների համար մեծ ամաններ են հար-



(նկար № 9)

կաւոր, մանաւանդ որ շատ անգամ ջուրը բնակութիւնից հեւու էր լինում, սկսեց կողովները ներսից կաւով սուաղել։ Մարդս փորձեց սուաղած կողովով կերակուր եփել և դրեց կրակի վրայ, կողովն այրուեց և մնաց կաւէ ամանը, որ թրծուելով ամրացաւ։ Այսպիսով մարդս նկա-

տեց, որ կրակով կարելի է ամուր ամաններ պատրաստել և շուտով սկսեց ձեռքով ամաններ պատրաստել (նկար № 9), որով մարդիկ արդէն կարող էին և եփել և հեղուկները պահպանել։




(նկար № 10)

32/178-62

Հին կաւէ ամաններ են գտնուած, որոնց վրայ պարզ կերպով երկում են կողովների ճիւղերի հետքերը, իսկ երբ մարդիկ առանց կողովների էին պատրաստում, այն ժամանակ նրանք ամանները դրսից զարդարում էին նկարներով, որ մինչև այսօր գոյութիւն ունի։ Այստեղ ձեր առաջ կայ (նկար № 10) կաւէ կատարելագործած ամանների մի ժողովածու, որոնք գտնուած են Զվիցերիոյ ցցէ տներից բաղկացած գիւղերի տեղերում եղած տղմի մէջ։

Բարից յետոյ գործածութեան մէջ է բրոնզէ եղել սրոնզ կոչուած մետաղը, որ եւ երկաւ ստացւում է աղջոնձի ու անաղի խառնութէ դմբից քաղցրերիոյ ցցէ բնակարան-

ների տիղմում գտնուած են ոսկէ, արծաթէ և պրոնզէ առարկաներ։ Պէտք է նկատել, որ ոսկին ու արծաթը հինգ սկզբից ծառայել են որպէս դարդեր և վաղուց հետէ մարդը այդ երկու հանքերին յատկացրել է «ազնիւ ու թանկագին»



(Նկար № 11)

երկար ժամանակ նա ծառայութիւններ մատոյց մարդուն, սկսեցին ամաններ ու զէնքեր պատրաստել (Նկար № 11) և ի հարկէ բբոնզն էլ ունի շրջաններ։ Այստեղ բերած նկարը Զւիցերիայում գտածներիցն է։

Բբոնզից յետոյ մարդիկ դտան վերջապէս

մականունը և ըստ այնմ էլ վարուել այդ երկօի հետ, իսկ բըրոնզը փոխարինել է քարին, որովհետև պղինձն առանձին վերցած շատ փափուկ մետաղ է և նրանից աւելի շուտ ամաններ կարելի է պատրաստել քան գործիքներ ու զէնքեր, մինչդեռ բբոնզը ամուր է՝ կարծր, գործածութեան համար էլ մասամբ նըպատակայալ արմար և

նրկալ, որով վերջացաւ բբոնզէ գործիքներ ու զէնքեր պատրաստելու առվորութիւնը և կարելի է ասել, որ երկաթէ դարը գեռ այսօր էլ շարունակւում է, թէպէտներկայումս կան աւելի կարծր հանքեր, երկաթի գիւտից սկսած սկսուեց խկական յառաջադիմութիւնը։ Մինչեւ այդ ժամանակ մարդիկ քարէ խոփով էին հերկում, իսկ այդ օրից երկաթը փոխարինեց։

Դեռ այսօր էլ կան հին երկաթագործարանների ու դարբնոցների տեղերի հետքեր և պարզ երկում է, որ մարդիկ ամենից շատ այդ արհետափն են զարկ տուել։

Մարդու գոյութեան առաջին օրից կենդանի գոյութիւն է ունեցել և շունը, որ մարդ ներ դու հետ ըրջում էր և կերակրուում նրա մնացորդներով, բաւականանում էր մարդու շպրտած ոսկորով։ Յետոյ մարդը լսողին ընտելացրեց, որովհետև նա էլ կերակրուելու համար մեծ հոգս չէր պատճառում ու ջոկելուն էլ անընդունակ էր։ Երբ մարդը բնակարան շինեց իր համար, բնակարան մտաւ փոքրիկ մուկը, որին հետևեց նրա թշնամի կատուն և ընտելացաւ։ Որսորդութիւնը նրան մի շարք օգնականներ տուեց, մարդը ընկնում էր կենդանիների ու գաղանների ետևից և յաճախ նըրանց հետևելով գտնում էր նաև նրանց որջերը՝ բուները և որովհետև մեծերին չէր կարողանում բոնել, հաւաքում էր փոքրերին՝ ձագերին

ու բերում իր բնակարանում պահում—մեծացնում ու ընտելացնում։ Այսպիսով նա շուտով այծերի ու ոչնարների հօտեր կազմեց և շուտով ընտանի կենդանիների շարքն անցան կուլը, ծին, ուղարք, եղջերուն և այլն, որոնք խոտակեր լինելով հեշտ էր պահել, իսկ գաղանները չընտելացան, որովհետև մասկեր էին, իսկ մարդն ինքը յաճախ ամիսներով մասի երես չէր տեսնում և վերջապէս կենդանիները ոչ այնքան ուտելու համար էին, որքան որպէս տնտեսութեան օգնականներ։ Կենդանիներին հարկաւոր էր ինամել և մարդիկ ստիպուած էին ձմեռուայ պաշարը հոգալ, բայց որովհետև հօտերի բազմութիւնը նրանց համար դժուարացնում էր պաշարի հարցը, ուստի և նրանք ստիպուած էին տարուայ որոշ եղանակներին խոտաւէտ տեղում ապրելու ու որպէս խաշնարած թափառական կեանք էին վարում։

Մարդիկ սկզբից հետէ աշխատում էին ծովագնն. ջրերին մօտիկ հաստատուել, որպէս ջոհթիին, զի ջրի պակասութիւն չզգան։ Վաղուց արդէն նրանք նկատել էին, որ կան առարկաներ, որոնք մնում են ջրի երեսին, բայց և կան առարկաներ, որոնք սուզում են։ Երբ մարդը մտնում էր ջրի մէջ և դուրս գալու ժամանակ պատահում էր, որ յենուում էր ջրում լողացող գերանի կամ տախտակի վրայ և բռնելով ջրի երես բարձրանում և բնական է որ

կհամոզուէր թէ առհասարակ փայտը չի սուզւում և ահա նա մտածում է օգտուել այդ բանից։ Եթէ նա մի գերան վերցնէր և նրա օգնութեամբ լող տալ սկսէր, դժուար էր և հարկաւոր էր հաւասարակշռութիւն, ուստի նա վերցնում է-մի քանի հատ գերան, կապում և լաստ է պատրաստում, որի վրայ կարող է նստել և ինքը և բաւական ծանր առարկաններ կարող է տեղաւորել, այնուամենայնիւ լաստը չի սուզուիլ։ Նա սկզբում պատրաստում է նաև յենաթի, որով կարողանում է առաջ մղել լաստը, իսկ յետոյ յենաթին լեկի է փոխառում, որով կարեմ է լաստին ուղղութիւն տալ։

Լաստը լողում է, իսկ մարդը կանգնած է և նկատում է, որ քամին խփելով նրան իրեն է հպատակեցնում ու քշում այն կողմը, ինչ ուղղութիւն որ բռնել է քամին։ Բնական է որ այս բանը մարդու ուշադրութիւնից չէր կորչիլ և հէնց այդ երկոյթը դրդեց մարդուն առագաստնելը պատրաստել, որով շատ հեշտացաւ ծովագնացութիւնը։ Այսուհետև մարդը փորձեց նաւ պատրաստել։ Նա վերցնում է հաստ գերան և փորելով միջուկը պատրաստում է նաւակ։ Բայց միջուկ փորելը հեշտ բան չէ, ուստի նա սկսում է կրակի օգնութեամբ այլել միջուկը, յետոյ տաշում է, որպէս զի հաւասարակշռութիւն պահպանուի և նրանով սկսում է լողալ։ Ժամանակի ընթացքում թիւեր են աշխարհ գալիս և արդէն

ամեն ինչ հեշտանում է:

Առագաստներն առաջ երկի ծառերի կեղեցներից են պատրաստուել, յետոյ արդէն թաղիքներից ու գործուած կերպամերից:

Զուրն արդէն որպէս բնութեան պահՄԻՉՔ հանջներից մէկը սկզբից ի վեր գործ

ներ էր ածում, բայց միևնոյն ժամանակ շատ հին ժամանակներում արդէն մարդիկ գործ են ածել կալծ և նրանք սկզբում չէին կթում, ինչպէս որ գեռ այսօր էլ սովորութիւն ունին վայրենի ժողովրդներից մի քանիսը և ուղղակի բերանը գնում են կենդանու ծծին ու ծծում: Երբ մարդիկ արդէն խաշնաբածութիւն սկսեցին, նրա հետ էլ երկի սկսեցին կթել կաթը և գործածել այնայլ նպատակներով:

Բայց կային և արհեստական հեղուկներ—խմիչքներ, որոնք մարդկանց արբեցնում էին, բայց նախնի մարդը չէր կարողանում հասկանալ նրանց հասցրած վնասը, որովհետեւ երբ նա յոդնած ու թմրած խմում էր, մի տեսակ առոյգ էր դառնում, ոյժերը վերականգնում էին և դրան հետևում էր քունը, որով մարդս կարողանում էր հանգստանալ: Զանազան ժողովուրդներ դեռ ուշ ժամանակներում բազմատեսակ խմիչքներ ունէին, որ պատրաստում էին բոյսերից, բայց որոշ կերպով չի կարելի ասել թէ որ խմիչքն է եղել տիրապետող նախապատմական դարի ընթացքում, միայն յայտնի է, որ Մեղրը ան-

յիշատակ ժամանակներից արդէն շատ տարածուած է եղել ամեն տեղ և մարդիկ նրանից կերակուրներ էին պատրաստում, խմորեղէնի հետ խառնում, բայց մեղրը ուտելով մարդու ստամոքսը վնասում է, որովհետեւ նա դիւրամարս չէ և մարդիկ ջրի մէջ լուծում ու մի տեսակ քաղցր խմիչք էին պատրաստում, որ ժամանակի ընթացքում եփ էր գալիս և նրանից ստացւում էր մի տեսակ արբեցուցիչ խմիչք: Յյդ խմիչքը երկար ժամանակ մեծ ժողովրդականութիւն էր վայելում և պատմական դարերում:

Միևնոյն եղանակով մարդիկ սովորեցին և գարեջուր պատրաստել, որ առաջանում էր ալրի ջրի մէջ լուծելուց: Գարեջուրը շատ էր ժողովրդականացած նաև Հայաստանում Քրիստոսից 6—7 դար առաջ և յոյն պատմիչների ասելով Հայաստանի հարեան ազգերը մեծ քանակութեամբ գարեջուր էին արտահանում Հայաստանից:

Երբորդ խմիչքն է զինին, որ աստացւում է խաղողից և դարձեալ միևնոյն ճանապարհով: Խաղողը քամելով քաղցր խմիչք է ստացւում, որ մի քանի օրուայ ընթացքում նոյնպէս եփ է գալիս և ստացւում է զինին: Գինին ի հարկէ աւելի էր ներգործում, քան գարեջուրը և հնում մարդիկ սովորաբար գինին ջրով էին գործածում: Բացի այս եղել են և այլ տեսակ խմիչքներ, որոնց ինչ լինելը կամ մինչեւ մեղ չի հասել և

կամ թէ մեր ունեցած տեղեկութիւնները աթերի են:

Այս բոլորը կատարւում էր միայն նրա համար, որպէս զի մարդս կարողանար իր գոյութիւնը պահպանել, բայց երբ արդէն նա գտաւուտեստ, բնակարան, հագուստ ու կարեռ գործիքներ, նա արդէն սկսեց կազմակերպուել՝ սկիզբ առաւ նրա բուն կուլտուրական-հասարակական կեանքը:

ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մարդս մենակ կամ առանձնացած գերդաստան եկ լու ապրելով չէր կարող իր առօրեայ պէտքերը հոգալ, որովհետեւ ամեն ՏԱՆԻՔ գէպքում նրան օգնող ընկեր էր հարկաւոր. երկրագործը երկրագործի ընկեր էր գառնում, խաշնարածը խաշնարածի, ձկնորսը ձկնորսի, որսորդը որսորդի և բերքն ու ձեռք բերածն էլ բաժանում էին հաւասար չափով: Այստեղից առաջացաւ խմբական կեանք՝ մարդիկ ապրում էին խմբուած ու յաճախ ազգակցական կապերով կապուելով գեղդաստաններ էին կազմում:

Նախնի ընտանիքը այն չէր, ինչոր այժմս է, միայն երբ արդէն գերդաստանները առանձ-

նացան, այդ մէկ տեսակ խմբակցութիւնը շարունակուեց մինչև այսօր և դեռ այսօր էլ ինչպէս բոլոր արևելեան ազգերի, այնպէս էլ մեր մէջ կան նախնական ձեռվ բնակւող գերդաստաններ:

Սկզբում ամուսնութիւն գոյութիւն չունէր այլ մարդիկ բազմակին էին, իսկ կանայք էլ պատկանում էին ամեն մի մարդու և այդ իսկ պատճառով էլ չկար իսկական ազգակցութիւն և ընտանիք, մինչև անգամ քոյր ու եղբօր միջն ամուսնութիւն գոյութիւն ունէր, որովհետեւ նրանց քոյր եղբայր լինելն էլ որոշ չէր:

Կամաց-կամաց մարդկութիւնն այն համոզման եկաւ, որ ազգակցական ամուսնութիւնը վնասակար է և արգելեցին, որով և համոզուեցան, որ ոչ ազգակցական ամուսնութիւնից ծընուածներն աւելի ուժեղ են: Այս օրէնքը պահպանելու համար սերունդների հաշիւկար և այդ հաշիւը մասամբ մնացել է և մեր մէջ. բաւական է եթէ յիշենք ժողովրդի ասած «օխտ պորտը», որ նշանակում է եօթը սերունդը: Սերունդը սկզբում հաշւում էր մի մօրից առաջացածների հաշուով, որդիք, թոռները, ծորները և այդ գէպքում մայրը մինչև անգամ մի տեսակ իրաւունքների տէր էր և ցեղն անգամ հնագանդւում էր: Այս բանը գեռ այսօր էլ գոյութիւն ունի շատ ժողովրդների մէջ: Այս գէպքում կինը աչքի էր ընկնում որպէս ընկեր-աշխատաւոր և դաշտերն

էր մշակում, բայց երբ արդէն սղամարդը ստի-
պուած էր որպէս խաշնարած չուել մէկ տեղից
միւսը, բնական է, որ կինն էլ ստիպուած էր
թողնել դաշտը և չուել մարդու հետ և այդ
դէպքում արդէն սղամարդու իրաւունքները գե-
րազասութիւն ստացան և ամուսնանալով մի այլ
ցեղից վերցրած կնոջ հետ կազմում էին առան-
ձին ընտանիք. Նրանց որդիքն ու թոռները բոլորն
էլ հպատակում էին մէկին՝ ընտանիքի հօրը,
որ կոչում էր նահապետ, իսկ ցեղն էլ կոչում
էր նահապետական: Ցեղը շուտով բազմանում
էր. ճիշտ է, նրանք ունեին ընդհանուր դաշտեր,
անտառներ, ջրամբարներ և ունեցածն էլ ըսդ-
հանուր էր, բայց դժուար էր մեծ հօտերի հա-
մար արօտատեղիներ գտնել, ուստի և ստիպուած
էին բաժանուելու, որովհետեւ անվերջ կոխներ
էին տեղի ունենում: Առհասարակ բաժանում
էին եղբայրները և կազմում առանձին նահա-
պետութիւններ, բայց եթէ դեռ չբաժանուած
ընտանիքի հայր նահապետը մեռնում էր, ցեղը
հպատակում էր անդրանիկ որդուն, որ հօր մա-
հից յետոյ ընդունում էր որպէս լիազօր նա-
հապետ:

Վերջին ու ամենալունուած ամուսնու-
թիւնը զոյզից կազմուած ընտանիքն էր, երբ
արդէն մարդիկ որոշ պայմաններով համաձայ-
նութեան էին գալիս ու ամուսնում:

Մարդկութիւնը բազմանալով ամենից
ՍՏՐԿՈՒՀ շուտ չարագործութիւն սովորեց, որով-
թիւն հետև գա և հեշտ էր և ձեռնտու:
Նահապետութիւնները բազմանում են,
անցնում է ժամանակ և նոր սերունդը մոռա-
նում է նախնիքների ազգակցութիւնը, աշխա-
տում են միմեանց գերազանցել բաջութեամբ:
Նրանք ապրում էին անհաշտ, միցեղ աշխատում
էր ձնել միւսին և մինչև անգամ յաղթողները
յաղթուածի միսն էին ուտում, բայց երբ արդէն
կեանքը փոքր ի շատէ հեշտացաւ, մարդակերու-
թիւնը վերջացաւ: Այժմ նրանք ողջ ողջ բըռ-
ուում էին յաղթուածներին և բերելով իրենց
բնակափայրը, ծառայեցնում. այդպիսիները կոչ-
ում էին ստրուկ:

Մարդկանց խմբական բնակչութիւնը
գիշել եի երկուսի էր բաժանում, մի մասը
քպացը: ապրում էր ճիշտ միենոյն տեղը, որով-
հետեւ կապուած էր հողի հետ, ինչպէս
օրինակ երկրագործները և կոչում էին նաստա-
կեաց, իսկ միւս մասը ստիպուած էր մի տեղից
միւսը գնալու, ինչպէս օրինակ խաչնարածները
և կոչում էին թափառաշըջիկ: Նստակեաց ժո-
ղովրդին ենք պարտական, որ այսօր մենք այս-
քան յառաջադիմել ենք: Նրանք ապրելով միշտ
միենոյն տեղը, իրենց համար բնակարաններ էին
կառուցանում և այդպիսով հիմուեցան զիւղեր,
որի բնակչութիւնը աշխատում էր իրեն բարե-
կեցութեան համար միջոցներ որոնել և այդպի-
սով գիւղի հասարակութեան մէջ երկում են
երկրագործներ, երկաթագործներ, կօշկակարներ,
սափրիչներ և այլն:

Դիւղը հետզհետէ մեծանում է և փոխում
քաղաքի, որտեղ արհեստներն աւելի են
զարգանում ու յառաջադիմում: Այժմ արդէն
կայ երկու դաստկարգ՝ զիտացի և քաղաքացի,
որոնք շարունակ գործ ունեն իրար հետ:


ՍԵՓԱԿԱՆ ԳԻՒՂՈՒՄ սեփականութիւնը համայնա-
ՆՈՒԹԻՒՆ կան է, ամենքն էլ աշխատում են հա-
եւ ԱՌԵՒ սարակութեան համար, մէկը ցորեն է
ՏՈՒՐ ըորդը զէնք ու գործիք և փոփոխում
են միմեանց մէջ, որով սկիզբ է առնում փո-
խանակութեան առևտուրը: Փոխանակութեան
առևտուրը սկսուեց այս ժամանակ, երբ արդէն
մարդիկ մի տեսակ մասնաւոր սեփականատէրեր
էին դարձել և այլ ևս չէին հպատակւում համայ-
նական սեփականութեան օրէնքներին:

Այս առևտուրը կատարում էր գին ունեցող
առարկաներով, կամ կշռում էին կամ չափում.
այսեղից էլ որոշ մեծութեամբ ու կշռվ մե-
տաղի կառներ առաջ եկան, որով հնարուեց
դուամբ: Դրամի ամենահին մետաղներն են բրոնզ
երկաթ, արծաթ և ոսկի:

Առևտուրը կատարում էր երկու կերպ:
Քաղաքներում կային շուկաներ, գիւղացիք իրենց
բերքերից աւելորդ մասը բերում էին քաղաք վա-
ճառելու և քաղաքը լցւում էր, որովհետեւ վա-
ճառում ու գնում էին համացեղ մարդիկ և այս-
պիսի առևտուր կոչում է ներքին: Շուտով ա-
ռաջացաւ մի նոր դաստկարգ, որոնք վաճառական
էին կոչում. գրանք միջնորդի դեր էին կատա-
րում առնում էին տեղական ապրանքը և փո-
խանակում այլ երկրի ապրանքի հետ ու բերում

իրենց երկերը: Այսպիսի առևտուրը կոչում է
արտաքին:

ՃԱՌԱՆ- Մամնաւոր սեփականութեան դաղա-
փարը մարդկութեան վրայ ունեցաւ
ԳԱԿԱՆՈՒ- իր վատ ազգեցութիւնը. օրինակ երբ
ԹԻՒՆ մի մարդ մեռնում էր յաճախ նրա հետ
թաղում էին նաև կնոջը, ստրուկնե-
րին ու սեփականութիւնը և կամ այրում: Ներ-



(Նկար № 12)

կայում գտնուած են մի շարք գերեզմաններ
(Նկար №№ 12 և 13), որոնք առանձին բնակա-
րանների են նմանում և այստեղ ոչ միայն
մարդկան կմախքներն են թաղուած, այլև տանու
իրեր՝ ջրամանը, կաթսան և այլն. Ժամանակի
ընթացքում մարդիկ զգացին, որ մարդու հետ
թաղելով նրա սեփականութիւնը, զրկում են նրա
արենակից յաջորդներին, հէնց որդոցը և որոշե-
ցին ունեցած թողնել ժամանակներին: Այստեղից
առաջացաւ ժառանգականութիւն:

կեանքի պայմանները փոխեցին մարդ-
ՊԵՏՈՒ- կանց և սկսուեց առաջնութեան պայ-
ԹԻՒՆ քարը, որով ուժեղները ձնշում էին
թոյլերին և ցեղերը, մանաւանդ նրանք
որոնք աւելի ևս նեղուած էին շրջապատողներից



(Նկար № 13)

սկսեցին միանալ, որպէս զի հնարաւորութիւն
ունենան գիմագրելու թշնամուն։ Յեղերի այս
տեսակ միաւորումից առաջացան ազգեր և կազ-
մուեցան պետութիւններ։ Այս անգամ երկիրը
գառնում է բազմացեղ ժողովրդի սեփականու-
թիւն, որոշում են սահմանները և կառավարուում
որոշ օրէնքներով։ Նրանց միջև թէպէտ անվերջ
պատերազմներ տեղի ունեն, բայց շարունակուում
են առևտրական յարաբերութիւնները և եթէ մի
մարդ մի պետութիւնից մտնում է օտար պետու-
թեան սահմանները, նրան ընդունում են, բայց
պահանջում են հպատակուել երկրի օրէնքներին։

Ինչպէս որ ցեղի գլխաւորը իշխանաւոր էր,
այնպէս էլ պետութեան մէջ կար իշխանաւոր,
որ կամ ժառանգաբար էր ստանում այդ կոչումը

և կամ նրան ժողովուրդն էր ընտրում։ Հին մար-
դիկ առ հասարակ նայում էին ժառանգի արժա-
նաւորութեան վրայ և գոյութիւն ունէր ժողո-
վրդական ներկայացուցչութիւն որ կոչում էր
Համայնքի Խորհուրդ, իսկ աւելի ուշ ծերակայտ,
որի անդամները ընտրում էին պատկառելի ծե-
րերից։ Աւշ ժամանակներում իշխող լինելու ցան-
կութիւնը ստեղծեց ժողովուրդի կառավարողները և
նա էր համառ այդ կոչմանը, ով իր ուժով կա-
ռողանում էր կուլ տալ ուրիշի իրաւունքները։

Բայց թէ ի՞նչպէս էր խօսում մարդը,
ԼԵԶՈՒ դրան շատ գժուարութեամբ կարելի է
պատասխանել, միայն ներկայումս հ-
ղած վայրենիները կենդանի պատկերներ են և
նրանց մէջ գեռ ևս կան լեզու չունեցողներ, ո-
րոնք խօսում են զանազան նշաններով։ նոյն էին
անում և նախնի մարդիկ։ Նրանք սկզբում խօ-
սում էին նշաններով և բնական է որ խմբուած
մարդիկ միշտ միևնույն նշաններով էլ հակաց-
նում էին միմեանց։ Այդ նշաններից բառեր ա-
ռաջացան և բառերից էլ լեզուներ։

Քարէ գարեշրջանում մարդիկ աշխատումէին
նկարել և գրաւոր լեզուն այսպեղից էլ սկսուեց։
Ամենահին գիրը կոչում է զաղափարազիր, այսին-
քըն նրանք գիրը չգիտէին, այլ ու զած առարկան
նկարում էին։ Բայց այսպիսով չէին կարող ցան-
կացած միտքն արտայայտել, ուստի և պայմա-
նական նշաններ հնարեցին, որով առարկայի գոր-
ծողութիւնն էին ցոյց տալիս։ Սրանից յետոյ
վանկազիր հնարեցին, այնպէս էին գրում, ինչ-
պէս այժմեան ըէքրուսները՝ առարկան նկարում
էին և կամ բառի որևէ վանկը, մնացածն էլ վան-

կի հնչիւնի նշաններով էին ներկայացնում: Վան-
կի հնչիւնային նշանները շատացան և այդ նշան-
ներից էլ կազմուեց այրքէնր: Դրելու համար
գործ էին ածում քար, մետաղ, կաւէ աղիւսներ
և այլն:

Վաղ ժամանակներից մարդու շրջապա-
կրօն տի ստեղծագործութիւնը վերագրում
էր հոգիներին և ամեն մի տեսանելի ու
անտեսանելի առարկան աստուածացնում, երկ-
րագործը վախենում էր թէ իրեն բարերարողնե-
րից և թէ վասողներից և պաշտում էր նրանց,
ինչպէս են՝ հող, երկինք, արև, կայծակ, որոտն
և այլն և ի հարկէ մարդու այդպիսով երկու գա-
ղափար էր ճանաչում՝ չար և բարի ու նրանց
հաւասարապէս պաշտում:

Նախնի մարդիկ գաղափարական աստուա-
ծութիւն չէին ճանաչում, այլ ամենը առարկայա-
կան էր ու նրանց ձուլում էին, շինում, նկա-
րում և վերջը պաշտում, իսկ հարկաւոր դէպքում
շնորհակալութիւն էին յայտնում: Շնորհակալու-
թեան ծէսը կատարում էին որոշ խումբ մար-
դիկ. նահապետների օրով նոյն իսկ իրենք նա-
հապետները, իսկյետոյ կազմուեց կախարդ մարդ-
կանց մի դասակարգ, որոնք զուրմ՝ էին կոչում:
Ժողովուրդը շնորհակալութիւն մատուցանելիս
առառածուածութիւններին պաղից, բերքից, կենդա-
նիներից նուէրներ էր բերում, որ քրմերի սե-
փականութիւն էր դառնում: Ոչ միայն հնում,
այլ և նորումս կային և կան ժողովրդներ, ո-
րոնք մարդիկ էին գոհարերում, բայց տիրապե-
տող քաղաքակիրթազգերն արգելեցին այդ սո-
վորութիւնը:

* ΣΥΝΩ Ա. Կ. Ա. ՄԱՅԱԿԻՆԻ
ԱՑԱԽԱՐԵՎԱՆԻ ԱՆՎԱ

Հայոց
գրչութեան 1

ՀՀ Ազգային գրադարան



NL0269566

13122